ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐԻ
ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, (0237)34441 metsamormeria@yandex.ru

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

29 հունվարի 2015 թվականի N 2-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ ՄԵԿՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 6-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի թիվ 143-Ն հրամանի պահանջները և կատարելով ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի կողմից հաստատված և Մեծամորի քաղաքային համայնքի ղեկավարի կողմից վավերացված ներքին աուդիտի 2015 թվականի տարեկան ծրագրի պահանջները՝ Մեծամորի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի 2013-2014 թվականների գործընթացների մասով համակարգի գնահատման աուդիտ իրականացնելու նպատակով

## ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1. Սահմանել ներքին աուդիտի առաջադրանքի նպատակները.
   1. համայնքային ծառայողների անձնական գործերի վարման գործառույթներ
   2. դիմումների և գրությունների մուտքի, գրությունների ելքի մատյանների գործառույթներ
   3. աշխատակազմի համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի և այդ պաշտոնները զբաղեցնող համայնքային ծառայողների ատեստավորման աշխատանքների իրականացման ապահովման գործառույթներ

2. Ներքին աուդիտի առաջադրանքի նպատակներն իրագործելու նպատակով իրականացնել՝
   1. քաղաքապետարանի գործավարության աշխատանքների կատարման ոլորտում իրականացված հսկողության համակարգերի արդյունավետության գնահատում, ինչպես նաև պարտադիր գործունեության ենթակա փաստաթղթերի առկայության որոշում
   2. համապատասխան գրանցամատյանների տվյալների արժանահավատության փաստացի ուսումնասիրություն
   3. ներկայացված հաշվետվություններում և տեղեկատվություններում արտացոլված տվյալների համապատասխանության գնահատում

3. Նախատեսված աուդիտի տարեկան ծրագրով առաջադրանքների կատարման ժամկետ սահմանել 2015 թվականի փետրվարի 2-ից մինչև 2015 թվականի փետրվարի 24-ը:

4. Աուդիտի առաջադրանքի մասնակիցներ նշանակել ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավար՝ Քնարիկ [illegible]յանին, աշխատակազմի քարտուղար՝ Նինա Թադևոսյանին:

5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Քաղաքապետ՝ ՌՈԲԵՐՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2015թ. հունվարի
ք.Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐԻ
ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, (0237)34441 metsamormeria@yandex.ru

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

29 հունվարի 2015 թվականի N 1-Ա

## ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, Հայաստանի Հանրապետության «Աշխատանքային օրենսգրքի» 158-րդ հոդվածի 1-ին մասով, 159-րդ հոդվածի 1-ին մասով 161-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի «ամենամյա լրացուցիչ աշխատավարձի իրավունք ունեցող առանձին կատեգորիայի աշխատողների ցանկը, այդ արձակուրդի նվազագույն տևողությունը և տրամադրման կարգը սահմանելու մասին» 1384-Ն որոշումով՝ և հիմք ընդունելով Մեծամորի քաղաքապետարանի ենթակայության «Մեծամորի բարեկարգում» ՀՈԱԿ-ի տնօրեն Վահրամ Հակոբյանի 2015 թվականի հունվարի 23-ի դիմումը

## ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1.Արմավիրի մարզի Մեծամորի քաղաքապետարանի ենթակայության «Մեծամորի բարեկարգում» ՀՈԱԿ-ի տնօրեն Վահրամ Հակոբյանին տրամադրել ամենամյա հերթական արձակուրդ 2015 թվականի փետրվարի 2-ից՝ 20 /քսան/ աշխատանքային և 4 /չորս/ լրացուցիչ օր տևողությամբ:

2.Վահրամ Հակոբյանին աշխատանքի մեջ համարել 2015 թվականի մարտի 6-ից:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Քաղաքապետ ՌՈԲԵՐՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2015 թ. Հունվարի 29-ին
ք.Մեծամոր